

լանալուն, որին օգնեց և այն հանգամանքը, որ բացի ամերիկացիներից Բագուի տեղական մեծ արտահանող ֆիրմաներն ևս սկսեցին բուռն Բագուի մէջ հում նաւթ և կէրօսին գնել մեծ չափերով: Բայց պէտք է նկատել, որ նաւթի գնի հետզհետեւ բարձրանալը ստիպեց ամերիկացիներին աւելի զգուշութեամբ գնել և նրանք՝ դէժ ատժամանակեայ կերպով դադարեցին նոր գնումներէն և դիմեցին Տէխասի կէրօսինին, որ իր յատկութեամբ ռուսականից լաւ է համարվում: Արդէն մի քանի նաւաբեռ այդ կէրօսինից հասել է անդլիական շուկայ, ուր վերջերս ռուսական կէրօսինը տիրաւորող զեր էր կատարում: Ուստի երկուց կայ, որ կէրօսինի գնի աւելի բարձրանալը, կարող է ամերիկացիներին եթէ ոչ բողբոլմին, գոնէ զգալի կերպով ստեղծել Բագուից և կամ առիթ տալ նրանց զանազան միջոցներով, դիմել Բագուի հրապարակը ձեռնելու համար, միանալով ուրիշներին հետ...

Բագուի նաւթի տարեկան արտադրութիւնը 1903-ին մօտ 600 միլիօն պուլ էր, որ նօրմալ վիճակ է Բագուի համար:

Կէրօսինի գնի բարձրանալը՝ կառավարչական շրջաններում միտք յարուցեց երկաթուղու փոխարկութեան վարձը մեծացնելու: Այս վարձն էր նախ 12 կօպէկ պուլին՝ Բագուից մինչև Բաթում: Երբ 4 տարի առաջ գնեցր յոյսպէս բարձր էին, 12-ից բարձրացրին մինչև 16, իսկ այժմ այդ էլ քիչ են գտնում և ենթադրում են աւելացնել 3 կօպ, թէ և կան առաջարկողներ, որ մինչև 10 կօպէկ պէտք է աւելացնել: Այս խնդիրը քննելու համար դեկտեմբերի վերջերը Պետերբուրգում յատուկ խորհրդակցութիւն կատարվեց, որին մասնակցում էին բոլոր ձեռնհաս պաշտօնական անձինք և նաւթարդիւնաբերողների ներկայացուցիչները: Այս վերջինները ընդարձակ գեկուցումներ են ներկայացրել, որոնց մէջ շատ իրաւաբան կերպով առաջ են բերում բազմաթիւ զօրեղ պատճառներ տարիքը աւելացնելու դէմ:

Եւ իբրեւ հազիւ թէ նաւթային արդիւնաբերութիւնը սկսում է քիչ ազատ շուշը բաշխել և իր ճգնաժամից դուրս գալով կամաց կամաց ամբարնալ, ահա տարիքի մեծացնելու ձեռն առնել նոր հարկ է դրվում նրա վրա, իբր թէ արտահանողների խոշոր շահերից՝ գանձարանին էլ մաս հանելու մտքով: Գործի էութեան հմուտ երդողների համար գաղտնիք չէ, որ այդ շահերը այնքան էլ խոշոր չեն, որքան շատերը սովոր են երևակայել, որովհետեւ կան կողմնակի հանգամանքներ, որոնք մեծապէս նուազեցնում են դրանց: Բացի դրանից պէտք չէ մոռանալ, որ Բագուի թէ միջին և թէ մեծ գործարանատէրերն ու արտահանողները՝ մեծ քանակութեամբ ապրանք են ծախել կանխաւ, այս 1904-ին յանձնելի և նրանք՝ այդ ապրանքը ծախած ժամանակ ի նկատի են ունեցել այժմեան տարիքը—16 կօպէկ և համեմատաբար պակաս գնելով են ծախել: Յամենայն դէպս՝ այս մասին եղած բոլոր թեր և դէմ առարկութիւնները այժմ՝ ընդունութեան տակ են Պետերբուրգում և, ինչպէս լսվում է, այս ամսի ընթացքում կործակել խնդրել: Տարիքը աւելացնելու հարցը դրված է ոչ միայն կէրօսինի համար, այլ և ուրիշ հանքային իւղերի—(СМАЗочная масса и соляробный дестилать):

Դեկտեմբերի ընթացքում տեղի ունեցաւ Բագում նաւթարդիւնաբերողների սովորական աստիճանական ժողովը, որ զբաղվեց նաւթային արդիւնաբերութեան վերաբերեալ առօրեայ կարևոր հարցերով և որոշեց ներկայ 1904-ի մուտքի և ելքի բիւջէն: Այս բիւջէն շարունակ աւելանում է: Այս տարի նա հասաւ մօտ 1,800,000 ռուբլի գումարի: Ինչպէս յայտնի է, այս գումարը ստացվում է նաւթահորերի և գործարանների արտադրութիւնների վրա դրված յատուկ տուրքից իւրաքանչիւրի արդիւնաբերութեան համաձայն և ծախվում է բացառապէս նաւթային շրջանի պէտքերի համար, այսինքն բանորրների և այլ աշխատատեղերի բժշկական, առողջապահական, գաղութական և այլ պէտքերի համար, ճանապարհների շինելու և նորոգելու և այլ արուեստական նպատակների վրա:

Նաւթային արդիւնաբերութեան համար շատ կարեւոր էր անցնել տարի տեղի ունեցած Բիբլե-էյրաթի յայտնի աճուրդը, որը սենատի կողմից քանդվեց զանազան գլխաւորաբար ձեւական պատճառների հիման վրա: Ոնջելը դեռ ևս առկա վիճակի մէջ է:

Վերջերս՝ Պետերբուրգում տեղի ունեցած մի մեծ խորհրդակցութեան մէջ, որին մասնակցում էին բոլոր ձեռնհաս միւնիստրութիւնների ներկայացուցիչներ, միաձայն որոշվել էր թողնել բոլոր այդ աճուրդի ենթարկված հո-

ղերը իրանց հին, այսինքն այժմեան կապալառուների ձեռքը, ոչ պակաս քան 40% տոկոսից, հիմն ընդունելով վերջին աճուրդի տուած արդիւնքը: Բայց մինչև որ այս ծրագիրը մի-նիստրների կօմիտէի հաւանութիւնն ընդունի, նա զեռ կարող է փոփոխութեան ենթարկել և իրօք լուր է պատում թէ անհաւանական չէ, որ Բիբլե-էյրաթի այդ հողերը նորից աճուրդի դրվեն: Մենք սակայն հակված ենք կարծելու և առհասարակ պէտք է յուսալ, որ վերջուիչաւ խորհրդակցութեան միաձայն կարծիքը կը յաղթանակէ և նոր աճուրդ չի նշանակվի: Յամենայն դէպս՝ պէտք է ենթադրել, որ այս գարնան վերջնականապէս կը լուծվի այս հարցը ևս:

Կովկասում բացի Բագուից կան մի քանի ուրիշ տեղ ևս նաւթահանքեր: Դրանցից գլխաւորն է՝

Գրօգին, որի նաւթային արտադրութիւնը 1903-ին հասաւ մօտ 33 միլիօն պուլի: Դրօզնին իր գնելով հետևում է սովորաբար Բագուին, ունի նոյնպէս կէրօսինի արտահանութիւն, թէ և անշուշտ Բագուի հետ համեմատելով: Այնտեղ գործում են գլխաւորապէս օտար ընկերութիւններ:

Բեռէն, որ իսկապէս անցեալ տարի միայն երևան եկաւ կամ հաստատվեց իբրև նաւթահանք, շնորհիւ Նօբէլի կատարած պեղումների և ունեցած անկան ֆօնտանի: Թէ և դեռ փոքր չափով, բայց այս նոր նաւթային շրջանը ապագայ է խոստանում: Բէրէնէյ գտնվում է Պետրօվսկից ոչ շատ հեռու (Կապից ծովի եզրերին մօտ):

Չասնա: Այս տեղի վրա 2 ընկերութիւն կայ կառված, մէկը անգլիական (350,000 անգլիական ոսկի գրամազիլով) և միւսը ռուսական (Պետերբուրգի), չը հաշուելով մասնաւոր անհատները: Անգլիական ընկերութիւնը (Chatma Oilfield Cy) արդէն սկսել է հորեր փորել, բայց արդիւնքը դեռ յայտնի չէ:

Ընդհանրապէս խօսելով՝ 1904 տարին մեր նաւթային արդիւնաբերութեան համար սկսեցվում է շատ աշուղ կերպով և անկասկած է, որ ներկայ բարձր գները՝ գուցէ թեթեւ փոփոխութիւններով, տեղական կը լինեն ամբողջ տարվան համար:

Բագուցի

ՆԱՄԱԿ ՂԱԼԱՐԻՅ

Դեկտեմբերի 29-ին

Դեռ ևս թարմ է այն գերեզմանը, որ կլանեց Ղալարին յայտնի Վարդան Մանուկեանցի դին ծաղիկ հասալում: Ղալարն էլ կորցրեց իր ազնիւ ու համեստ գործիչներից մէկին, որ չը գիտէր, թէ ինչ ասել է յուսահատվել, թուլանալ խոշորոտների առաջ, որի սրտում այրվում էր գործելու սրբազան հուրը:

Մանուկեանցը յայտնի է և «Մշակի» ընթերցողներին իր թղթակցութիւններով, ուր իր թոյլ գրչի խորողութեամբ ծակում էր հասարակական ժանրոտ պալարները և գործով ժանրը մաքրում...

Դաքաղի վրա գրված էր մի պատկ իր ընկերներից, եկեղեցում հայր Ս. Ե. Շաթիրեանցը խօսեց նրա համեստ գործունէութեան մասին, իսկ պ. Ռ. Աստուածատրեանը, շեշտելով հանգուցեալի մեծ ուսման տէր լինելը, համեմատեց նրան մեր շատ և շատ բարձր կրթութիւն ստացած երիտասարդների հետ, որոնք վաղուց են հարստութեան մէջ բաղդ որդիներ:

Հանդուցեալը թողել է չորս հատ անտիպ թարգմանած պիեսներ:

Եւ մեր կեանքի երկնքից մի փոքրիկ աստղ էլ թռաւ անհունի մէջ, իսկ նրա ցօրքը մնաց մեր սրտերում...

Ա. Պարիւր

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մեզ հաղորդում են երկրի զանազան մասերից, որ ներկայ ձմեռը ամեն տեղ ցուրտ է ներք: Ձիւնի քանակութիւնը այնքան շատ չէ եղել, որ նրա ջուրը բաւականութիւն ստէ զարնան ամիսների համար: Եթէ առաջիկայ զարնան անձրևներ պակաս լինեն, բոյսերը կարող են վնասվել:

Երէկ, յունվարի 15-ին, Թիֆլիսի դատարանական պալատում վերաքննվում էր եղիշ վարդապետ Մուրադեանի և Ջաբրիա Ջանիւրեանի գործը: Ինչպէս յայտնի է մեր ընթերցողներին, այդ գործը նախ ընդվեց նահանգական դատարանում և վերջապա Նդիշ վարդապետի արդարացումով: Զանգուղեանի

հաւատարմատարը բողոքել էր նահանգական պալատին, որը վերաքննելով գործը ուշադրութեան առաւ այն հանգամանքը, որ հաւատարմատարը իր ստացած հաւատարմաթղթի գօրութեամբ իրաւունք չուէր մասնաւոր գանգաւներ տալու և այդ պատճառով որոշեց ներկայ գործը դադարեցնել առմիշտ:

Մեզ հաղորդում են, որ Թիֆլիսի առաջին գիշերօթիկ ապաստարանում անցեալ դեկտեմբերին գիշերել են 3810 հոգի, որոնցից 3666 եղել են տղամարդիկ, իսկ 144 կանայք: Ըստ ազգութեան բաժանվում են հետևեալ կերպով. ռուսներ՝ 1643 հոգի (1539 տղ., 130 կին), հայեր՝ 1338 (1328 տղ., 10 կին), վրացի՝ 623 հոգի (592 տղ., 31 կին), թուրքեր՝ 80 տղ., 15-հեր՝ 58 և զանազան ազգութիւններ 23 հոգի: Եւստիօրներ թուում են եղել նմանապէս 1 ռուսացի, 8 մեխանիկ, 62 աշակերտ, 6 ուսուցիչ:

Ինչպէս յայտնի է, մեր երկրի այգեգործները ստիպված են ամեն տարի պահպանել իրենց խաղողի այգիները զանազան հիւսնադութիւններից, օրինակ օդիւրում, միւշգիւն և ուրիշ հիւսնադութիւններից, գործածելով ծծումբ, պղնձի արջասպ և զանազան գործիքներ: Կառավարութիւնը մի քանի տարի շարունակ որոշ արտօնութիւն էր սահմանել և ազատել, որ այդ իրերը մաքրեն: Այս օրերս Պետերբուրգից տեղեկութիւն է տրված, որ արտօնութիւնը կը շարունակվի և ներկայ 1904 թուականի համար:

«Новое Обозрение» լրագիրը, որ «Մշակի» հետ միաժամանակ, նոյեմբերի 15-ին, երկու ամսով դադարեցրված էր, երէկ, յունվարի 15-ին, սկսեց նորից լոյս տեսնել:

Ճանապարհների հաղորդակցութեան միւնիստրութեան խորհուրդը՝ Թիֆլիսի երկաթուղու վարչութեան միջոցով յայտնում է, որ վճարված է վճարել քաղաքին 6042 ռ. 50 կ. իր տոկոսներով, սկսած 1896 թուից, այն 12 դեկտեմբեր 204 քառակուսի սաժէն հողի համար, որ երկաթուղու վարչութիւնը վերցրել է Կարսի երկաթուղու համար:

Օղէտայի քաղաքային վարչութիւնը, կամենալով քաղաքի յատակագիծը կազմել, դիմել է Թիֆլիսի քաղաքային վարչութեան, խնդրելով ուղարկել դրա վերաբերեալ նիւթերը, որ քաղաքի ժողովը է Թիֆլիսի յատակագիծը կազմելիս:

Ինժեներ Բաստամովը, դիմելով քաղաքային դռնային, խնդրում է թոյլ տալ իրան շինել ձիաբարձ երկաթուղու դիժ ս. Կարապետի փողոցից դէպի Նախալովկա:

ԱԼԷԿՍԱՆԴՐՕՊՈԼԻՅ մեզ գրում են. «Կիրակի, յունվարի 21-ին, նախկին ձմեռային ժողովարանի դահլիճում, դերասան Ն. Յովհաննիսեանը, տեղիս մի խումբ երիտասարդների մասնակցութեամբ, ներկայացրեց Ա. Դիւմայի «Քին» յայտնի պիեսան: Սկզբի երկու գործողութիւնները շատ թոյլ անցան: Լաւ էր պ. Յովհաննիսեանի «Քին» դերում, և Մ. Ստեփանեանը Քինի յուշարար Սոլոմոնի դերում. միւսները թոյլ էին, մասնաւոր կանացի ոգեբեր: Դահլիճում համարեա բոլոր տեղերը յոյնված էին. պ. Յովհաննիսեանը մտադիր է իր երկրորդ ներկայացումը տալու»:

ՂՈՒԲԱՅԻՑ մեզ գրում են. «Մօտ օրերս իր այգիներով, արօտատեղիներով, անտառներով և շրերով հարուստ Նոր Ուշիսկայ կարուածքը ծախվեց, ինչպէս ասում են, մօտ երեք հարիւր հազար ռուբլիով»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀՅՈՒԱԽՈՐ ԱՐԵՒԵԼՔՈՒՄ

Կօրեան յուզվում է.—Լօնդոնի լրագիրների հաղորդած տեղեկութիւնների համաձայն, Կօրէյի ներքին վիճակը հետզհետէ կրիւրեալան է դառնում: Սպասվում է ընդհանուր ապստամբութիւն: Կայսրը հրատարակեց հրովարտակ, որի մէջ ցուակցութիւն է յայտնում, որ երկրորդ կործանվում է ժողովրդի ծուլութեան և թուլութեան պատճառով: Պալատում տիրում է սարսափ: Ռուսաց զեապանք առաջարկեց կայսրին իր տունը, իբրև ապաստան, հարկաւոր դէպքում: Կօրէյական զօրքերը հրաման ստացան բոլորովին չհզօր մնալ այն դէպքում, երբ ընդհանուր կառաջանայ օտարազգի

զօրքերի մէջ: Ամերիկական մարսային կօմիսար Բրօուշը մտցրեց Կօրէյի գլխաւոր քաղաքը 7000 զօրք և բաժանեց նրանց փամփուշտներ:

—Իլլիօն Խօսուն է. «Contemporary Review» հանդէսի մէջ տպված յայտնի հրապարակախօս էմիլ Դիլօնի յօդուածը մեծ հետաքրքրութիւն է ներկայացնում: Նկարագրելով մի քանի խօսքով Եապօնիայի այժմեան վիճակը, նա ասում է. «Ինչպէս եապօնացիները, որոնք անհանգիստ են խաղաղ ժամանակ, կարող են դիմանալ պատերազմին այնպիսի հզօր պետութեան հետ, որպիսին Ռուսաստանն է: Դրութեան հեղհանութիւնը կայանում է նրանում, որ պետութիւնների մի ամբողջ խումբ շահագրգռված է Ռուսաստանի անաշուղթեամբ, և սակայն նրանցից ոչ մէկը չի համաձայնի գործել իբրև դաշնակից Եապօնիայի հետ, որը ուրախութեամբ կը գոռար Ռուսաստանին «կանգնիր», եթէ նրան որ և է աշակցութիւն ցոյց տրվէր: Այս Դիլօն Խօսուն է և Ռուսաստանի մասին, որը, նրա կարծիքով, չէ ցանկանում, կամ վախենում է պատերազմից ուրիշ պետութիւնների հետ: Պատերազմը, նոյն իսկ աշողը, կը կանգնեցնէ նրա նուաճողական քաղաքականութեան ընթացքը: Եապօնիան փող քիչ ունի, բայց Ռուսաստանն էլ ինքն պատերազմ չի յայտնի, և գուցէ Եապօնիան ստիպված լինի ընդհարվել երկու երեք պետութիւնների հետ, փոխանակ մէկի: Շատ հեշտ է Ռուսաստանի համար իր ետեկց քաղ տալ Կօրէյային, սրա աւանդական թշնամու դէմ. արդէն խօսում են, որ այդ երկու պետութիւնները պատերազմական դաշնագիր են կնքում: Գուցէ Եապօնիան աշուղութեամբ կուէ Ռուսաստանի հետ, բայց երկու երեք կողմերի հետ կուէր և բացի դրանից Ֆորմօզայի ապստամբութեան երկիւղը—այդ բոլորը կարող է ընդլմել Եապօնիային նիւթանի մէջ, որից նա այլ ևս չի վերականգնի: Մեծ պետութիւնները միջամտում են:

—«Berl. Tageb.» լրագիրը հաղորդում է, որ մեծ պետութիւնները դիմել են եապօնական կառավարութեան՝ առաջադրութիւններ անելով խաղաղութիւնը պահպանելու անհրաժեշտութեան մասին: Այդ առաջադրութիւնը արված է ոչ թէ հաւաքական պաշտօնական միջնորդութեան ձևով, այլ իւրաքանչիւր պետութիւն առանձնակի յանձնել է Տօկիօյի իր զեապանին դիմել եապօնական կառավարութեան և բարեկամաբար խորհուրդ տալ պահպանել status quo արեւելեան Ասիայում և այնպիսի բայլեր չանել, որոնք կարողանային խանգարել խաղաղութիւնը: Ստանդարտով այդ առաջադրութիւնները, եապօնական կառավարութիւնները կայացրեց պետութիւններին մի յիշատակագիր, որի մէջ մանրամասն բացատրում է վիճելի խնդրի էութիւնը: Ռուսաց կառավարութիւնը իր կողմից դիմեց պետութիւններին յիշատակագրով, որով բացատրեց իր տեսակէտը: Յոյս կայ, որ համաձայնութիւն կը կայանայ և խաղաղութիւնը կապահովվի:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Լօնդոնի «Daily News» լրագիրը հաղորդում է, որ Լօնդոն եկած երկու բօլգարական գործիչներ—բօլտոր Չակաթով և Իվան Բաղուրով, որոնք իբրև բօլգարական գիւղութեան բժիշկներ լաւ ծանօթ են Բօլգարիայի զօրքի վիճակի և Սակեդոնիայի գործերի հետ, այն կարծիքը յայտնեցին, թէ զարնան պատերազմը Թիւրքիայի և Բօլգարիայի մէջ անխուսափելի է: Բօլգարիան կարող է 250,000 զօրք հանել մագազինեան հրացաններով և 140,000 զինուոր աւելի պարզ սիսամի հրացաններով:

—Եւրօպական լրագիրները հաղորդում են, որ հարաւային Պարսկաստանում, Գարը-Շիրին (Անուշ Բերդ) կոչված տեղում անգլիական այն ընկերութիւնը, որ ստացել է Շահից երկու տարի առաջ Պարսկաստանի նաւթային հանքերի շահագործութեան միաշնորհը, գտել է առատ նաւթի հորեր և արդէն մի քանի տեղ շարունակում են խփում: Ենթադրում են, որ Պարսից ծոցի երկարութեամբ նաւթի առատ հանքեր կան: Եթէ այդ ենթադրութիւնը ստուգվի, պարսկական նաւթարդիւնաբերութեան գործը կարող է մեծ ֆլուսներ հասցնել Բագուի նաւթարդիւնաբերութեան:

—Նոյն լրագիրները հաղորդում են, որ անգլիական կառավարութիւնը յայտնել է Պարսից կառավարութեան իր յօժարութիւնը փոխ տալ 100 միլիօն ռուբլի այն պայմանով, որ Պարսկաստանի բոլոր մաքսերը 99 տարով իրան կապարով տրվին:

—Այս տարի Շվեյցարիայի Բագէլ քաղաքում, սեպտեմբերի 1—3-ին (ն. տ.) պէտք է գումարվի մի գիտնական միջազգային կօնգրէս—«Կօնգրէսի ընդհանուր պատմութեան Ուրվագծային կօնգրէս», որ պէտք է բաղկացած լինի հետևեալ աշխատանքներից. 1) այսպէս կոչված «Բնական ազգերի» կրօններ, 2) Ձիւնայինների և եապօնացիների կրօններ, 3) Եւրօպացիների կրօն, 4) Մեծիւնների կրօն, 5) գիւղացիների կրօն:

Հնդկաստանի և Իրանի կրօններ, 6) Յոնյների և հուսթայների կրօններ, 7) գերմանացիներ, ինչպես և յուզները կրօններ, 8) քրիստոնեական կրօններ:

«ՄՇԱԿԻ» ՀՆՈՒՄԳԻՐՆԵՐԸ

ՌՈՒՄՍՏ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

14 յունվարի

10հոկտեմբեր, Երասխյան հայրերի և, որ Իրան ոչինչ չէին Ռուսաստանի պատմության մասին: Երասխյան վերջին յայտագրից յետոյ կառավարութիւնները ոչինչ հայրերգութիւններ չեն ուղարկել միմեանց, երեկ ուսուսական հետեւել յայտագրերը կը հեռագրվի ուղղակի Պետերբուրգից Տոկիոյ դեպարտմենտ, որը կը յանձնէ յայտագրերը երասխյան կառավարութեան:

ՏՕԿԻՕ: Պետերբուրգի երասխյան դեպարտմենտի հետագրեր, մէջ, որ ստացված էր այստեղ յունվարի 13-ին, հայրերգութեան, թէ Ռուսաստանը զիտաւորութիւն ունի ուղարկել պատմական էջի մի քանի օրով, ի նկատի ունենալով այդ, արտաքին գործերի միջնորդը անյայտ հրաւրեց միջնորդութեան բարձրատիճան պաշտօնեաներին և տեղի ունեցաւ երկարատեւ խորհրդակցութիւն:

ՏԵՄԼՏԶԻՆ: Ռուսական գործերի Կոմիտեի գումար քանակութեամբ, Իւստինկայի գործերը հետաքրքրած են երկաթուղիական հողամասից, այդպիսով Կոմիտեից—Սինդիկատի հողամասը պաշտպանում են թաթար գնեցիկի գործառնները, որոնք գտնվում են ուսանների աղ-դեցութեան տակ:

ԲԵՐԼԻՆ: Յունվարի 13-ին երեկոյան ժամանեց ընկերական թագաւորը և կայսրանուս գիմաւորվեց Վիլհելմ կայսրի կողմից:

ՀՈՒՄ: Լրագիրները հարգում են, որ այնտեղի գրադարանի հրդեհի ժամանակ այդպիսին մինչև հարեւր հազար արարական, զգուսական, թիւրքական և լատինական շատ թանգագիրն ձեռագիրներ:

ԲԻՐԻՆԴԻՉԻ: Գնեցիկ Զիւրիխ յունվարի 13-ին ձանաթը ընկաւ Կ. Պոլիս:

ՄՕՍԿՎԱ: Նահանգական գեմատիօի ժողովը որոշեց միջնորդել, որպէս զի օրէնսդրական ձանապարհով բացատրվի այն հարցը, թէ ձայնաւորների թրակի թիւն ժամանակ պէտք է ժողովը օրինական համարել:

ՊՐՏ-ՍՐՏՈՒՐ: (Ուշացված է): Տեանցիկնում այդպիսի ուսուչինական բանիկ նոր շինութիւնը:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Յունվարի 14-ին Պետրոպոլիսի տաճարն այցելեցին Թագաւոր Կայսրը և Թագուհի Կայսրուհի Ալեքսանդրա Ֆեօդորովնա: Թագուհի Կայսրուհի Մարիա Ֆեօդորովնա այցելեց Պավլովսկի ինստիտուտը: Յունվարի 14-ին Ջմերային պալատում, գերմանական կայսրի ծննդեան օրը, Բարձրագոյն ներկայութեամբ կայացաւ նախաճաշ, որին հրաւիրված էր գերմանական դեսպանը դեսպանութեան անդամներին հետ:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Արտասահմանեան լրագիրների թղթակցների տարածած տեղեկութիւնները այնքան տեղեկացիօղ ողով են ներշնչված, որ կարծես թէ դիմամբ հնարվում են մտքերը յուզելու համար Հեռու Արեւելքում և ուրիշ երկրներում: Այդ տեղեկութիւններին պէտք է կատարեալ անվստահութեամբ վերաբերվել, մանաւանդ որ նրանք յաճախ հնարվում են այնպիսի անձանց ձեռով, որոնք մինչև անգամ մամուլի լուրջ օրգանների թղթակցներ չեն: Այդպիսի մտացածին լուրերի փայլուն ազդեցիկ կարող է ծառայել ամէրիկական լրագիրների հաղորդած տեղեկութիւնը «Daily Mail» լրագրի թղթակցի խօսակցութեան մասին փոխարքայի տրամադրութեան տակ գտնվող Պրաստի հետ: Կարող են հաւատարմացնել, որ անգլիական ժողովրդի տարածած տեղեկութիւնը կատարելապէս մտացածին է, իրան թղթակցի ձեռքով անձնանգամ իրապէս թղթակցի էլ չէ:

15 յունվարի

ԿՕԼՈՒՄԲՕ: Յունվարի 14-ին եկան երասխյան «Նիսին» և «Նատուգա» զինուորական նաւերը:

ԲԵՐԼԻՆ: Դաշնակցական խորհուրդը որոշեց գումարել ժընէվ միջազգային կոնֆերենցիա վերաքննելու համար ժընէվեան պայմանագրութիւնը պատերազմի ժամանակ վերադրված զինուորականների վիճակը բարելոքելու մասին:

ՊԱՐԻՉ: Պարիզի և Բէլմի արքեպիսկոպոսները հանրապետութեան նախագահի անուսնով մի գրաւոր յայտարարութիւն ուղարկեցին, ընդգրկելով պատգամաւորների ժողովին ներկայացրված օրինագծի դէմ, որի համաձայն

մինչև անգամ կառավարութեան թոյլատրած դպրոցական միաբանութիւններից խլվում է դաստաւութեան իրաւունքը: Վերոյիշեալ յայտարարութեան մէջ, ի միջի այլոց, երկուց է յայտնվում, որ ենթադրվող օրէնքի հետեւանքը կը լինի կրօնի կատարեալ բացառութիւնը, իսկ դրա հետեւանքը կը լինէր Ֆրանսիայի կործանումը: Այն հաղորդած տեղեկութիւնը, որ իբր թէ Ֆրանսիական կառավարութիւնը Հոսմ ուղարկեց հաւատարմատար անձն բանակցութիւնների համար, Կօրէյի հետ կօնկորդատի վերաքննութեան մասին, լրագիրները անհիշելի են համարում:

Կ. ՊՕԼԻՍ: Էքզարքոսութիւնը յայտարարում է, որ օխրիդեան միտրօպոլիտի վրա բարդած մեղադրանքները հիմնված են կողմնապահ հաղորդագրութիւնների վրա և կատարելապէս մոտացածին են: Մակեդոնական երեք վիլայէտների ժանդարմէրիայի մէջ մտցել ցանկացող ուսու օֆիցէրների թիւը անցնում է 50-ից, սակայն դրանց թիւից, նոյնպէս և ուրիշ մեծ պետութիւնների օֆիցէրներից առ այժմ ընտրվում է միայն սահմանափակ թիւ:

ՄՕՖԻԱ: (Գիմարական շրջաններից): Ազգային ժողովում տեղի ունէին աղակալի վիճարանութիւններ իշխանի և նրա ընտանիքի դէմ մամուլի գործածած յանցանքների օրէնքը քննադատելու առիթով: Կառավարութիւնը կարծում է, որ այդ օրէնքը անհրաժեշտ դարձաւ հակադինաստիական տեղեկացիաներով մի քանի նոր լրագիրներ երեւալու պատճառով:

ԲԵՐԼԻՆ: Կայսրի ծննդեան տօնախմբութեան օրը Բալլետտըմ հաղորդեց ըէյստագում հետեւեալը. նորին մեծութեան մօտ ունեցած ունկնդրութեան առիթով, երբ Բալլետտըմ մատնացրոց արեց, որ, չը նայելով հիւանդութեան վրա, կայսրը դեռ շատ առաջ օպերացիայից տեսակցութիւն ունէր Թագաւոր Կայսրի հետ, կայսրը պատասխանեց. «Եթէ հիւանդութիւնը վտանգաւոր լինէր, ես, ի հարկէ, հոգ կը տանէի ապահովել իմ որդուն սերտ հարեանական յարաբերութիւններ»:

Նմբագիր՝ ԱԼԷԿՍԱՆԴՐ ԲԱԼԱՆՔՈՒՐ

Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ ԻՍՍԶԱԿ ՄԷԼԻԲ-ԱԼԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Թիֆլիսի Եղեգործական ուսումնարանի դասաւոր Ստոմիլյոի Մեդրաւինց եւ Մեդրաւայանական աւարականի պալէս:

Հաղորդում եմ պ.պ. մեղուպաններին, որ իմ պահեստում պատրաստվում են վաճառքի համար 100 պուղ արհեստական մոմաթերթ և 1000 հատ Դադանի սիստեմի շրջանակաւոր փեթակներ: Պահեստում ծախվում են նաև թէ ուսուսական և թէ արտասահմանեան մեղուպանական բազմազան գործիքներ. ֆագէլիսի և ուրիշ լոյսերի թարմ սերմեր, մեղուպանական դասագրքեր: Մասնաւոր պատուէր տուողներից ընդունվում է մեղրամոմ արհեստական թերթեր պատրաստելու համար: Պրէյս-կուրանտը ուղարկվում եմ երկու 7 կոպէկանոց նամակագրոյմ ստանալուց յետոյ: Ամեն ինչ վաճառվում է էփան գներով:

1—3

ԵՐԴՈՒՆԱԼ ՀԱՆԱՏԱՐՄԱՏԱՐ

ՋԱԽԱԳԻԿԻ ԲԱԼԱՆԿԱՆ

ՌՕՍՏՕՎԻՑԻՆԻ վրա տեղափոխվել է ԱՐՄԱՎԻՐ և ընդունում է գործեր՝ իր մասնագիտութեան վերաբերեալ: Հասցէն. Արմաւիր, Կիւսկայի օբ. լաստի. Սոսիսոյ Սոսիսոյ Դեզադ Եփ Բալլանտ. Ելեֆոն Դ 159.

1—5

Լոյս տեսաւ և վաճառվում է

ՐԱՅԻՐ

ԳԱՆԻՐ ԲԵԿ

Պատմական վեպը

I—II և III գիրք. վերջաւանով:

Գիրքն է փառապատ 5 ր., անկապ 3 ր. 50 կ. Մեղ մօտ վաճառվում է նաև նոյն հեղինակի «Սա մ ու է լ ը» գ. 3 ր. 50 կ. և միւս աշխատութիւնները:

Գիրքն կանխավճարով՝ Բալլ, Օգանեսու Գալանչիան.

1—10

Լոյս տեսաւ Ա.—ԴՕ

ՐԵԲԵԿԱ

Ջրոյց Բ. Սոսեմսկու, գիրք 3 կոպ.

Պատմական գտնվում է Երեւանում Արարատ գրավաճառանոցում:

1—3

Լոյս տեսաւ № 5 էլ. Օմեկո

ՍՊԻՏԱԿ ԾԱԿԻ

Տօվկալ

Թարգմ. Ս. Շահվերդեանց:

32 երես, գիրք 5 կոպ:

Վաճառվում է Թիֆլիսում՝ Կենտրոնական և Գուտտէնբերգ գրավաճառանոցներում, և Բագլում՝ «Պրոմէթէոս» ընկ. գրավաճառանոցում և Յ. Ղազանչեանի մօտ:

1—2

Լոյս տեսաւ № 6. Շիրվանգալի

ԱՐՏԻՍՏԸ

պատմութիւն

96 երես, գիրք 15 կոպ.

Վաճառվում է Թիֆլիսում՝ Կենտրոնական և Գուտտէնբերգ գրավաճառանոցներում, և Բագլում՝ «Պրոմէթէոս» ընկ. գրավաճառանոցում և Յ. Ղազանչեանի մօտ:

1—2

Լոյս տեսաւ Յովհաննէս Թումանեանի

ԲԱՆԱՍՏԵՂՈՒԹԻՒՆՆԵՐ

Գրքն է 3 րուբլի ք

Դիմել՝ Թիֆլիս, իշխանուհի Մ. Թումանեանի. Բարատինսկայ 8. կամ հեղինակին—Եփտովսկայ.

1—3

Բ Ժ Շ Կ Ա Պ Ե Տ

Տ. ԳԵՈՐԳ-ԲԵԳԵԱՆ

Ա. ՉԻԻ ԶԻԻԱՆ ԴՈՒԹԻՒՆՆԵՐ

Ընդունելութիւն ամեն օր.

Առաւօտեան ժամի 9-ից մինչև 12

Երեկոյան » 5-ից մինչև 7

Վերամիջնակարգ փ. № 16, տուն Եղիազարեանի:

41—100

Միջնակարգ դպրոցաւոր երիտասարդ ՈՐՈՆՈՒՄ ԵՆ ՈՐ ԵՆ Ե

ԳՈՐԾ ԿՍՄ ՊԱՅՏՈՆ

Հասցէն՝ «Մշակի» խմբագրատանը: 3—10

Երկու երեխաների մօտ պահանջվում է Մօսկվայում հայերէն լեզուն լաւ իմացող մի հայուհի: Հասցէն. Արաւ-Արաւեան հրապարակ, տ. Միլիանովի, բնակ. Շահապարեանցի: 1—3 (շաբ. 2 անգ.)

Վ Ա Ճ Ս Ռ Վ Ո Ւ Մ Ե Ն

սեփական ծառնոցում պատուաւորված 1—2 տարեկան սովորական մրգերի

ՄՐԳԱՏՈՒ ԾԱՌԵՐ

Ֆրանսիական և տեղական տեսակներ Առաջարկում ենք զանազան մրգերի 1904 թւին պատուաւորութեամբ բոլորովին յարմար ճոշներ (дички): Այլ ևս սեփական արդիւնաբերութեան խնձորի և տանձի թարմ սերմեր: Գներն էփան են:

Ցուցակն ուղարկվում է ձրի: Ուսուցիչարանների և վանքերի համար 10% զեղջ:

Հասցէն՝ Карасубазарь (Тавр. губ.), Бенглерову, (ա. 1) 3—5

Ե. ԹՈՓՉԵԱՆԻ խմբագրած

«ԼՈՅՍ»

Պատի և գրպանի օրացոյցները

Ս Պ Ա Ռ Վ Ս Ե Ն

Վաճառվում են. 1) Պատի օրացոյց, երկրորդ կրճատած հրատարակութեամբ (112 երես)—25 կ.: 2) «ԼՈՅՍ» օրացոյց հանդէս. 504 էջ, մօտ 30 գունաւոր պատկերներով:

Գիրքն ուղարկվում է 1 րուբլի 25 կոպ. պատույնի ձանապարհաձախ 35 կոպ.: Դիմել Թիֆլիս. Կրոնսկայ 11, Ե. Կոպչան.

2—5

Լ Ո Յ Ս Մ Ե Ս Ա

Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆԻ

Հ Ա Ն Ր Ա Մ Ա Տ Չ Ե Լ Ի Գ Ր Ա Ս Ա Ն Ի Առաջին գրքոյից

ԱՆԳԻՐՈՒՆԻ ՀԵՔԻԱԹՆԵՐԸ Պատկերազարդ, հեղինակի պատկերով և ինքնակենսագրութեամբ, թարգմ. Տ. Ջախի:

Գրքն է 50 կոպէկ:

Դիմել Թիֆլիսի գրավաճառանոցներին:

2—3

ОТКРЫТА ПОДПИСКА

НА 1904 ГОДЪ

на ежедневную политическую и литературную газету

„НОВОЕ ОБОЗРЕНИЕ“

(XXI й годъ изданія)

Подписчики нынѣшняго года, какъ городскіе, такъ и иногородные, желающіе подписаться на будущій годъ, вносятъ 6 руб. за годъ и 3 руб. за полгода. Новые же подписчики на обычныхъ основаніяхъ вносятъ 7 руб. за годъ и 4 руб. за полгода.

Допускается разсрочка платежа: къ 1-му января—4 р., къ 1-му июня—3 р. Для сельскихъ учителей, народныхъ и школьныхъ библиотекъ и благотворительныхъ учреждений сдѣлана скидка: годовая плата для иногородныхъ—6 руб., для городскихъ—5 руб.

Лица, желающіе подписаться, котораго проситъ уведомить ее о томъ и внести плату заблаговременно, по возможности не позже декабря, чтобы успѣть затовить адреса.

Подписка принимается въ Тифлисъ, въ конторѣ газеты, Барятинская ул., д. № 8.

Редакторы Г. и В. Тумановы. Издатель К. Тумановъ.

Продолжается подписка на 1904 годъ.

„ТИФЛИССКІЙ ЛИСТОКЪ“

(ГОДЪ ИЗДАНІЯ XXVII)

ПОДПИСНАЯ ЦѢНА.

На годъ: съ доставкой въ Тифлисъ—5 р., съ пересылкой иногороднымъ—7 р., за границу—12 р. На полгода: въ Тифлисъ—3 р., для иногородныхъ—4 р. и за границу—7 р. На 3 мѣсяца: въ Тифлисъ—1 р. 75 к., для иногородныхъ 2 р. 50 к. и за границу—4 р. На одинъ мѣсяць: въ Тифлисъ—75 к., для иногородныхъ—1 р. и за границу—1 р. 50 к.

ПОДПИСКА ПРИНИМАЕТСЯ на любой срокъ, но не иначе какъ съ 1 числа каждаго мѣсяца, исключительно въ конторѣ изданія: Головинскій просп., № 3.

ПЛАТА ЗА ОБЪЯВЛЕНІЯ: для Закавказья за мѣсто, занимаемое строкой петиита, передъ текстомъ—10 коп. и послѣ текста—5 коп. Извѣщенія о зрѣлищахъ печатаются на первой старницѣ по 20 к. за строку и на 4—по 10 коп. За объявленія въ справочномъ отдѣлѣ взымаются по 8 коп. за строку. Объявленія внѣ предѣловъ Закавказья принимаются исключительно въ центральной конторѣ торговаго дома Л. Э. Метцль и К-о въ Москвѣ, Мясницкая, д. Ситова, и въ отдѣленіяхъ его—въ С.-Петербургѣ, на Большой Морской, № 11; въ Варшавѣ, Краковское предмѣстье. № 3, по 21 к.—передъ текстомъ и 12 послѣ текста.

Մ Օ Դ Ա Յ Ի Ն Օ Ծ Ա Ն Ե Լ Ի Բ

„ՏՈՒՐԵՐՈՂՆ“

Ն Ո Ր Ո Ւ Թ Ի Ի Ն



Ընկերութիւն ԲՐՕԿԱՐ եւ Ընկ.

2—6

(օր. 20 օգ. ս. ն. յ. փ. ապ.)

(Մետցլ)

148,174